

ՄԱՏԱՆԱՅԻ ԼՆՈՒՆՈՎ

Չմեռն էր 1831 թուին: Փարիզի ժամացոյցով առաւօտը շատ կանուխ էր և բոլոր տները դեռ փակ էին: Մէկ մեծ, բարձր ու նեղ տան դռնապան նստած էր իւր փոքրիկ խցի մէջ և չնայելով խիստ ցրտին, նա ճրագի աղօտ լուսով կարկատում էր իւր կօշիկները, երբ լանկարծ գուռը ծեծեցին:

— Արդեօք ո՞վ կարող է լինել այսպէս վաղ ժամանակ, մրթմրթաց պ. Ժան Ժուլիօղոր:

Դուռը ծեծելուց լետու, անհամբեր ալցելուն սկսեց խիստ կերպով զանգահարել:

Պ. Ժանը իւր գործը վար դրեց և սովորականից աւելի խոփուած դէմքով գնաց գուռը բանալու:

Բայց երբ նա տեսաւ մի շատ կարգին հագնուած պարոնի, յարգանքով ողջունեց, համարելով նորան ուսիկանութեան գործակալ:

- Այստեղ վարձով բնակարան տրոււմ է:

Դռնապանը շփոթ աւած և յուռ էր:

—Ազատ բնակարաններ կան այստեղ թե ոչ, պատասխանեցէք վերջապէս, շարունակեց անյայտ ալցելուն:

—Այո՛, ողորմած տէր, կան՝ մէկը առաջին լար-
կում, միւսը երկրորդում. կայ և ամենավերջին լարկում
աղբատ մարդկանց համար:

—Ուրեմն ինձ տարէք վերնալարկը:

— Միթե նա ուզում է վերնաթափել ընկերացիներին՝
վարձել, մտածում էր գունապանը զարմացած:

Նա կարծում էր թէ անհնարին է, որ այդպէս լաւ հաղնուած պարոնը կարողանայ ապրել մի որջի մէջ, որտեղ ազատ մուտք ունեն թէ քամին և թէ անձրևը:

— Երեւի խելագար է, մտածեց նա և աչքերի տակով նայեց եկուտի երեսին, մի քիչ վախ զգալով։

— Բայց պարոն, այնտեղ վերևում անյարմար է ձեռք պէս անձի համար, ասաց դռնապանը բարձր ձայնով, քիչ համարձակութիւն առնելով։

Անծանօթը անհամբեր շարժումներ արեց, չուզեցաւ անելորդ դատողութիւններ լսել։

— Ես կը տեղափոխուեմ այնտեղ հէնց այսօր. պատրաստեցէք բնակարանը։

Եւ դռնապանի ձեռքը կարծես բնակարանի վարձի փոխարէն 20 ֆրանք դնելով, նա գնաց նստաւ մի փուռաւոր կառքի մէջ ու անյայտացաւ։

*
*
*

Պարոն և տիկին ժուալոգները վերնայարկը կարգէրելով խօսում էին հէնց որ պատահած դէպքի մասին և իրանց երեւակայութեանը շատ զուռ էին տալիս։

Երբ անծանօթը փողը հանելիս ետ տարաւ իւր մուշտակը, ես իմ աչքերով տեսայ, ասաց պ. Ժանը, որ նա ունէր պատուաւոր լէգիօնի կորմիր ժապաւէնը։

Արդեօք քնչ ցնորք է, որ պատուաւոր լէգիօնի ասպետը ընտրեց իրան համար այս վերնատունը, ամենավատ բնակարանը, որտեղ կատուն մինչև իսկ չէր ուղեւոր ապրել...

— Կարելի է մի որ և է սիրալին դէպք է, նկատեց տիկ. ժուալոգը։

— Ի՞նչ սիրալին դէպք, քնչ ես խօսում. ո՞վ հաւէս կունենայ սիրով պարապելու այս վերնատան մէջ. աւելի շուտ կեղծ դրամ շինող է... անկասկած այդ է... պէտք է արթուն լինել։

Բայց տիկին ժուալոգը, որ մի ժամանակ թատրոնի խմբական երգչուհի էր և որ միշտ ձգտում էր դէպի բոմանտիքականը... նա վճռեց, որ այդ անյայտ պարոնը անպատճառ Դօն-Ժուան է։ Այդպէս մտածելով, նա բոլոր ուժով յատակը սրբում էր, չվախենալով մեծ-մեծ մկներին երամակից, որ խանգարում էին նորան և զարմանում էին, թէ ինչպէս իրանց խաղաղ բնակարանում,

ուր նոքա այնպէս ազատ իզուում էին, մուտք է գործել աւելլել:

Տիկին ժուլյոզը նոր էր կարգի բերել այդ աղքատիկ բնակարանը, որ կարող էր պէտք դալ միայն թափառական խեղկատակների համար. երբ լանկարձ խորհրդաւոր անծանօթը նորից եկաւ իւր շքեղ կմիքով և այս անգամ հետը բերել էր իւր սպասաւորին, որի ձեռքին կար մի փոքրիկ նեղ ու երկար արկղ, որ նման էր մանկական դադաղի. սպասաւորն այդ դրեց իւր պառնի նոր բնակարանում:

Պարոն ժուլյոզը խորհրդաւոր հայեացք ձգեց իւր ամուսնու վերայ ու շշնջաց՝

— Մարդաստան է...

Յետոյ, իբր բոլորովին անտարբեր, հարցրեց ծառային, թէ քնչ կալ այդ արկղի մէջ:

Ծառան խորամանկ կերպով ժպտաց և պատասխանեց՝

— Չգիտեմ:

— Հը... մասնակից է երևում, անցաւ պ. ժուլյոզի մտքից:

Խեղճ ամուսիններին արդէն պատել էր սպասողական շրջութիւնը, վախն ու հետաքրքրութիւնը, երբ լանկարձ խորհրդաւոր պարոնն ասաց զոնապառնին:

— Պարոն ժան, ոչ ոքի ինչ մօտ չթողնէք, բացի մէկից:

— Շատ լաւ, պարոն, պատասխանեց զոնապառնը, բայց քնչպէս ես ճանաչեմ այդ մէկին:

— Նա ձեզ կտես մի պայմանաւոր խօսք՝ լատառնայի անունով:

Այդ խօսքերը լսելիս ողորմելի զոնապառնը աչքերը չռեց և բերանը լայն բացեց, նա այնքան շփոթուած էր, որ ոչ մի խօսք չկարողացաւ արտասանել, քսկ նորա կինը շարունակում էր զարդացնել իւր երեւակալութիւնը Իօն-ժուանի մասին...

Միևնոյն ժամանակ նորեկը հանդարտ կերպով քարձրանում էր սանդուխքի վրայով:

Շուտով ու սարսափած գոյգը դեռ ուշքի չէր եկել, երբ զանգակը խիստ կերպով քաշեցին: Եկաւ միւս

անձանթը չար դէմքով, յօնքերը կախած ու սուր նայուածքով:

— Այսօր այստեղ տեղափոխուել է մի նոր բնակիչ:

— Չեմ համարձակուում հերքել, բայց թէ նա որքի չի ընդունում:

— Չէ ընդունում. ոչ, նա ինձ կընդունէ. ես եկած եմ սատանայի անունով:

Եւ այդ խօսքերով անյայտ այցելուն շտապ-շտապ բարձրացաւ վերեւ:

*
* *

Այդ օրուանից վերնայարկի նոր բնակիչը, որը թէև չէր գիշերում իւր աղքատիկ կացարանում, նոյնպէս և սատանայի դեսպանը, ամեն առաւօտ միևնոյն ժամին գալիս էին վերնատունը, փակում էին դռները երկու կողպէքով և մնում էին այնտեղ մինչև իրիկուայ ժամի հինգը:

Պանապանը և նորա կինը յուզմունքից ու հետաքրքրութիւնից հանգիստ չունէին. ինչեւ չէին նօքա հնարում, որ միայն թէ կարողանային յանկարծակի, անսպասելի կերպով բռնել յանցանքի մէջ այդ խորհրդաւոր պարոններին... Նոքա կամաց-կամաց, թաթերի վրայ մօտենում էին վերնատան դռանը և շունչերը բռնած, սրտի բաբախումով, օկանջները դնում էին դռան ծակին, որ մի բան իմանան, բայց զո՛ւր, այնտեղից լսում էին միայն անորոշ ձայներ: Նոքա աշխատում էին նայել, մի որևէ բան տեսնել բանալիքի տեղից, բայց այդ էլ ծածկուած էր շշերի խցաններով... Այդ սատանայական մարդիկ երևի թէ մեծ քանակութեամբ խմիչք են գործ ածում, որպէս զի իրանց խիղճը մեռցնեն, մտածում էր պ. Ժուլյոզը:

Այդպէս անցաւ հինգ, թէ վեց շաբաթ: Վերջապէս, մէկ օր, իրիկնապահին, դեսպանին յաջողուեց լսել մի քանի խօսք:

— Մի վախենաք, այս անպատճառ կըյաջողուի: Նա ճանաչեց այդ բնակարանը վարձողի ձայնը:

Այն ժամանակ միւսը պատասխանեց՝

— Այնու ամենայնիւ սատանայի դերը շատ դժուար է։

— Նոքա սատանայի հետ դաշն կապեցին, մտածեց Թիկ. Ժուլյոզը և իւր մարդու թեւից ամուր բռնեց, որը դեռ շարունակում էր ականջ դնել։

— Դուք գլխաւորապէս լաւ պատկերացրէք ձեզ այն վայրկեանը, շարունակեց առաջին խօսողը, երբ նա գերեզմանից դուրս է կանչում մեռելներին, լետոյ սատանայի երևալը իւր ամբողջ խմբի հետ և մէկ էլ, երբ նա լսում է բոլոր սատանաների պատասխանը...

Պարոն Ժանի համար արդէն այդքանը բոլորովին բաւական էր։

— Ո՛հ, աւազակներ, ինչպէս դուք համարձակուում էք այս պատուաւոր տան անունը խայտառակել ձեր յանցաւոր խորհուրդներով... Ժամանակ է արդէն վերջ դնելու այս բանին։

Եւ նա վազեց ոստիկանատուն, պատմեց բոլոր մանրամասնութիւնները երկու անյալտ անձնաւորութիւնների մասին, ասաց ինչ որ լսել էր այն անթափանցելի գաղտնիքի մասին, որով նոքա իրանց շրջապատել են և յայտնեց նոյնպէս փոքրիկ դադաղի մասին։ Տիկին Ժուլյոզն էլ լուրջ կերպարանքով հաստատեց ամուսնու խօսքերը։

Ոստիկանութեան գործակատարը նոյա երկար ըսպասեցնել չտուեց, որովհետեւ այդ զարհուրելի պատմութիւնը նորա վերայ էլ մեծ տպաւորութիւն գործեց։

Նա հետը տարաւ էլի չորս ոստիկանների և գնաց այն տունը, որտեղ ապրում էին այդ երկու չարագործները։

Գործակատարը դուռն ամուր ծեծելով ասաց՝ բացէք յանուն օրինաց։

Իսկոյն դուռը բացուեց։

— Ո՛վ էք դուք, Բնչպէս է ձեր անունը, հարցրեց նա անծանօթներին։

— Ով եմ ես... Ես Զիակօմօ Մէլէրբերն եմ։

— Իսկ դ՞ուք, դիմեց նա միւսին։

— Ես մեծ օպերայի առաջին բասն եմ։

Բայց ոստիկանութեան գործակատարը դեռ բոլորովին չբաւականանալով այդ պատասխաններէից, հարցրեց թէ Բնչ էին ինուս նոքա այգեակը:

— Մենք սովորում էինք Բերտրամի գէլը ճիշդէրտ Դիւփօլտ օպերայից: Որը շուտով պիտի ներկայացուի բեմի վերայ: Եւ որպէսզի մեզ ոչ ոք չխանգարէ, մենք վարձեցինք այս բնակարանը, քաղաքի հեռու մասում:

Իսկ պ. Ժանը դեռ բոլորովին համոզուած չլինելով, բացականչեց, մատով ցոյց տալով՝

— Իսկ այն դադաղաձև արկղ՛ը, արկղ՛ը...

Բայց պատասխանի փոխարէն լսուեց մի բարձր ծիծաղ:

— Դա ցութակի դատարկ ամանն է, ասաց փրութկալով մեծ Մայէստեռօն:

— Դուք ուղղակի լիմար էք, բարկացած ասաց գործակատարը, դռնապանին:

Եւ խորը ողջունելով Մէյէրբէրին, ներողութիւն խնդրեց անհանգստութիւն պատճառելու համար ու դուրս գնաց միւս ոստիկանների հետ:

*
* *

Պարոն Ժանը և տիկին Ժուլիօյը, նախկին խմբական երգչուհին, պատիւ ունեցան առաջին անգամ Բեմի վրայ դրուած ճիշդէրտ Դիւփօլտ օպերան լսելու 1831 թուին: Տոմսակները նոցա ընծայել էր այդ նշանաւոր օպերայի յարգելի հեղինակը:

Թատրոնում, երբ լսուեց առաջին բառի խրոխտ ձայնը, որ գերեզմանից դուրս էր կանչում մեռելներին, Ժան Ժուլիօյը չկարողացաւ իրան զսպել և իւր կնոջ ականջին խորհրդաւոր կերպով շնչաց:

— Բայց այնուամենայնիւ ես միանգամայն համոզուած եմ, որ դա ինքը իսկական սատանան է...

Նշանաւոր Կոմպօզիտօրի կեանքի այդ դէպքը երկար ժամանակ Փարիզի հասարակութեան խօսակցութեան առարկան էր:

Բարդ. Գերմ. ՅԵՐՈՒՀԻ ԿՈՍՏԱՆԾԱՆՑ.